

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Ե. Պոլսոյ 4 մր. 8 Մճ.
Փառաւարդ 10 Մճ.
Վեցամսեյ Ե. Պոլսոյ 4 մր. 3 Մճ.
Փառաւարդ 5 Մճ.
Մասնագուման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կըլ-
այ :



ԼՐԱՔԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ած ամիսը Խորագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն Խորագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի : Պալա-
տի Սանտըքըար Զատուկի թիւ
198, Նոյն խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրուած ամիսը չվճարուած նա-
մակ չյնդուեալիք :



ՊԱՅՄԱՆՔ 8 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օսմանեան կառավարութեան և Աւստրիոյ տէրութեան մէջ Պոսնիոյ և Հէրսեօյի գրաւման խնդրոյն նկատ-
մամբ պայմանագրութիւն մ'ստորագ-
րուած է, որոյ պարզեցումները տակաւին
յայտնի չէ պաշտօնագրէս : Լրագիրը ոմանք կըսեն թէ Աւստ-
րիա յիշեալ պայմանագրութեամբ կը
հաճի եղեր որ Պոսնիոյ և Հէրսեօյի
միջիններուն մէջ խռովայն վեհ :
Սուլթանին տնուամբ կարգացուի :
Այս բանն իբրեւ կրօնական արարու-
ղութիւն կրօնից ազատութեան մէկ
հետեւանքը կրնայ համարուիլ, և իս-
լամք հարկաւ իրաւունք ունին որ
վեհ : Սուլթանին անունն իբրեւ խա-
լիֆա հասարակաց արօթից ժամանակ
կարգացուի : Կրտսի թէ Աւստրիա
Սուլթանին գերիշխանութիւնն ևս կը
ճանաչէ յիշեալ գաւառաց վրայ : Բայց
իւր զօրքը մինչև երբ պիտի կենան
Պոսնիոյ մէջ, այս խնդրոյ վրայ կե-
րէի որ պայմանագրութիւնը լուս է :
Աւստրիացիք անսահման կերպիւ պի-
տի կենան թերեւ իրենց մտած
տեղերն, ուր ֆրիւիփօլի զօրավարը
պատերազմական օրէնք հրատարա-
կեց ծանուցանելով թէ աւստրիական
զօրաց և սպայից դէմ սպանութիւն
ներ ու գաւազգրութիւններ եղան, և
ասոնց հեղինակներն ինչպէս նաև
մարդասպանութիւն և ուրիշ ոճիւր-
ներ դործողներն՝ ըստ պատերազմա-
կան օրինաց պիտի պատժուին : Ա-
պրտամբաց կարմէն Հաֆիզ փաշան
Աւստրիացոց զրկուած էր, որպէս
թէ հնազանդութիւն յայտնելու հա-
մար, բայց մինչև հիմա տակաւին լուր
չկայ անոր կատարած պաշտօնին վը-
րաց : Աւստրիական զօրքը կուպլինի-
ցայի կամ լուպլինի կողմէ հետաքոտու-
թիւն մ'ընելով՝ ապստամբաց կողմէն
յարձակում մը կրեր և ետ մղուեր է
մեծ կորստեամբ : Միւս կողմէն ֆրիւ-
իփօլի զօրավարն երեսուն վաշտ կա-
նոնաւոր զօրք զրկեր է, որք իրենց
հետ Օսմանցի կամաւորներ (թերեւ
Պոսնիացի պատսպարեալք) ունենա-
լով ապստամբաց վրայ կը քայլին : Ա-
պրտամբք կանաչ փաթից կը դնեն
եղեր և «փօթուր» կը հագնին : Այս
զգեստն հրամանատար Հաֆիզ փա-
շային ևս հագուցեր են :

Շաբաթ օրը Ռուսական մեծ զօ-
րահանգէսը կատարեցու Այսթեֆա-
նոս : Ռութուս և հինգ հազար զօրք
այս հանգիսին մասնակցեցան, և երբ
թօթիւնները զօրավարն ատենախօսու-
թիւն կընէր իւր զօրաց և սպայից,
հանդիսատես հաւարակութեան մէջ

գլուխը ֆէս դրած մարդ մ'ատրճա-
նակ պարպեց : Կըսուէր թէ թօթիւն-
պէն զօրավարը զարնուեր է ոտքէն :
սակայն այս զրոյցը չստուգուեցաւ,
և զօրավարն ողջ առողջ է : Ատրճա-
նակ պարպողն որ յոյն մ'է եղեր, ան-
միջապէս ձերբակալուեր է Օսմանցի
և Ռուս ոստիկաններէ, որք կըսուի
թէ սաստիկ գանակոծեր են զայն :
Թօթիւնպէն զօրավարին ատենախօսու-
թեան դալով շնորհակալութիւն յայտ-
ներ է զօրաց առ կայսրն և առ հայ-
րենիս ըրած անձնուէր ծառայութեան
համար, որով մինչև Կ. Պոլսոյ դուռ-
ներն եկան : Զրոյց կայ թէ Ռուսաց
զօրքն անմիջապէս մեկնիլ պիտի սկսի :

Յար տիւ Պոսնիոյ լրագիրը՝ տէ-
րութեանց խորհրդոյն մէջ Պ. Տէրեա-
նիի ընթերցած յիշատակագրոյն Բ.
Դրան տուած պատասխանը կը հըրա-
տարկէ : Բ. Դրան Հելլենաց պա-
հանջումները կատարելու տրամադ-
րութիւն չցուցներ, և զօրավար Մէհ-
մէտ Ալի փաշան հելլենական սահմա-
նազուլը կը զրկէ, որպէս զի եթէ
յարձակում պատահի, վանէ : Այս ըն-
թացքը Պէրլինի գաշնադրութեան
անհամաձայն կրնար համարուիլ, ուս-
տի և հեռագիրք կը ծանուցանէին
թէ հիւսիսային երեք տէրութիւնք
հրաւեր պիտի կարգան Բ. Դրան՝ որ-
պէս զի գաշնադրութիւնը դործադ-
րէ : Բայց եթէ Ռուսաց զօրքը մայ-
րաքաղաքին շրջականներէն կը մեկնի,
կերելի որ հաշտութեան դէմ առ այ-
ժմ նոր վտանգ չկայ, թէ և վիճա-
կին անստուգութիւնը կը շարունակէ :

Անգղիական էքօ լրագիրն անց-
եալներն Հայոց դէմ թայմիլ մէջ
թշնամական յօդուած մը հրատարա-
կող Պ. Բալիւրալի ընթացքը քննադա-
տելով կը կշտամբէ : «Պ. Բալիւրալ,
կըսէ, ճիշդիմներու ձեռք գաստիա-
րակուած է, և երբէք չէ կրցած այն
գաստիարակութեան աղբեղութեան
ազատիլ : Հայոց այս թշնամին նախ
իբրեւ ճիշդիմ տեղեկութիւն տա-
ցած էր Արեւելից վրայ, բայց իւր
հետ վիճաբանող իսլամաց փաստե-
րուն կամ իւր անձնական քննու-
թեանց առջև Տրիքենտոնի գաւա-
նութեան՝ այսինքն կաթողիկոսութեան
վրայ իւր հաւատարմորոյս և թէպէտ
բողոքական չեղաւ, բայց պապական
ալ չմնաց : Արաբները, թուրքերն և
անոնց ուրիշ համանմանները Պալին
հնազանդեցներու դործն ի բաց թո-
ղուց, և իւրեւ աշխարհական ճանա-
պարհորդութիւն գործ մ'եղաւ : Իւր
Արաբիոյ ճանապարհորդութիւնն հե-
տաքրքրական է թէպէտ, բայց իւր
ամեն տեղեկութիւնները փաստա-
թեան արժանի չեն : Այս հին ճիշ-
դիմ ճանապարհորդը Տրապիզոնի
Անգղիական հիւպատոսութեան պաշ-
տարիէն

տօնին մէջ ևս գտնուեցաւ, և հոն
իւր թէ Հայոց վրայ տեղեկութիւն
առած է : Պ. Բալիւրալ Հայոց Ֆալ-
մէրայէրն եղաւ : քանզի ինչպէս Ֆալ-
մէրայէր Յունաց պահանջումները
(թուղթի վրայ) հերքած էր, Պ. Բալ-
իւրալ ալ Հայոց պահանջումները (նոյն
պէս թուղթի վրայ) հերքեց : Սա կը
գտնէ թէ Հայք աղբ մը չեն, թէ
երկրագնդի վրայ Հայաստան ան-
ուամբ երկիր մը չկայ, թէ Հայոց ան-
կախ աղբայնութեան պահանջում-
ները ծաղրելի են և անհիմն, թէ
անհեթեթ է անդոյ աղբի մը բարե-
նորոգում և ինքնօրինութիւն տալ :

«Իւր տեղական գնուութիւններէն
այսպիսի եղբակցութիւն հանդ անձ
մը Լոյսլայի ընկերութիւնը թողելու
չէր : ճիշդիմներն իրենք իրենց ճըշ-
մարտութիւն մը կը գտնեն, և զայն
հաստատելու համար փաստի կարօ-
տութիւն չունին : Այսպէս թուրքիոյ
ինքնակոչ բարեկամները կամ Ռու-
սաստեացը չեն ուզեր Օսմանեան երկ-
րին մէջ անկախ աղբայնութեանց
հետք տեսնել : Եթէ կարելի է, ա-
նոնց էութիւնն իսկ պիտի ժխտեն :
Իրենց համար, Սերիֆա, Պուլաքիա,
Գարատաղ և Յունաստան իսկ աղբ
չեն :

«Գերմանական լրագրի մը Բէրայի
թղթակիցը կըսէ թէ Մեղդիացի և
Հրեայ թուրքաւորք Յոյներն ու Հա-
լերը չեն սիրեր, քանզի երկու աղ-
բաց առեւտրական հանձարն իրենց
ատելի է : Պ. Բալիւրալի Հայոց աղ-
բութեան ըրած թշնամանքը Ռուսիոյ
կուսակցաց շատ հաճելի պիտի ըլ-
լայ, քանզի այսուհետեւ Հայոց Պատ-
րիարքները, վաճառականներն և այլն՝
իրենց մտքին մէջ պիտի դնեն թէ
Տրապիզէնէն հնազանդութեան փաշ-
տութեան ևս պատկառելի չեն, և ժամանակէ
մ'ետեւ Անգղիա
յանկարծ պիտի գտնէ որ վաճառա-
շահ և զօրաւոր քրիստոնեայ աղբերն,
որք միայն պայմանաւոր ինքնօրինու-
թիւն կը պահանջէին, Անգղիոյ թըշ-
նամի եղած են, և անոր պաշտպա-
նութեան ներքեւ դրուած երկրին
մէջ Ռուսաստանը գալթականութիւն
ներ դարձած :

«Այլմայնէ Չայթուենի Գերմանա-
կան թերթին իսկ Պ. Բալիւրալի եր-
գիծական յօդուածը կը պարտաւէ և
կըսէ թէ Ռուսը արդէն անուղղակի
աղբեղութիւն մ'ունին Հայոց վրայ,
քանզի ասոնց ընդհանրական Կաթո-
ղիկոսն Էմիլիամին կը նստի, որ Ռու-
սիոյ իշխանութեան ներքեւ է : Ստոյգ-
է նաև որ հայկական Գարատաղ մը
կայ Կիւրոսէն ոչ այնչափ հեռի,
Ստոյ մօտերն, և Կիւրոսի Տաղի կը
կոչուի : Բայց Հայերը Պուլաքիոյ,
Պոսնիացոց և Գարատաղացոց նման
չապստամբեցան, այլ պարզապէս ար-
գար վարչութիւն մ'է իրենց ներ-

քին գործերուն համար ինքնօրինու-
թիւն պահանջեցին : Աւաւել վտան-
գաւոր է թշնամանել չափաւոր և
սակաւապէս ժողովուրդ մը քան թէ
անչափաւոր և խռովայն աղբ մը :
Ոմեն քաղաքութիւն տրուեցաւ
Հայոց, կը յարէ էքօ լրագիրը, մա-
նաւանդ անոնց աղբային զինուորու-
թիւն մը կազմելով Բիւրդերէն իրենք
զիրենք պաշտպանելու համար ըրած
խնդիրը մերժուելով, որպէս զի ի-
րենց աչքը թուրքիոյ և տակաւին
չփորձուած Անգլո-Հնդկական պաշա-
պանութեան վրայէն վերցնելով դէպ
ի Ռուսիա դարձնեն : Ռուսի և Ալ-
կէմայնէ Չայթուենի Բէրայի թղթա-
կիցը Պուլաքիոյ խաչակրութեան նը-
ման Հայկական խաչակրութիւն մը
ոչ միայն հաւանական, այլ և ստոյգ-
կը համարէ : Երբ Արարատէն մինչև
Տարսուս ընտները բոլոր երկրին մէջ
հրդեհը ճարակի, այն ժամանակ Պ.
Բալիւրալի նման թեթևասկիները սար-
սափելի և անժխտելի ապացոյց մը
պիտի ստանան Հայ աղբութեան գո-
յութեան վրայ :

Էքզիլ այս յօդուածն իբրեւ տեղե-
կութիւն թարգմանելէ ետեւ, հարկ
կը համարենք ըսել թէ Էմիլիամին կա-
թողիկոսութիւնն Հայոց վրայ անուղ-
ղակ կամ ուղղակի կերպիւ Ռուսա-
կան աղբեղութիւն տարածելու մի-
ջոյ մը չէ : Կաթողիկոսին իշխանու-
թիւնը միմիայն հոգեւորական է, և
ինք այնչափ այս դերը ճշդութեամբ
կը կատարէ, որ աղբային խնդրոյն
մէջ անգամ իւր օժանդակութիւնը
չկայաւ թուրքիոյ Հայոց : Իսկ դալով
Էքզիլ այն գիտալութեան թէ Հայոց
չափաւոր խնդրանայ անդործադրու-
թիւնը կրնայ իրենց աչքը թուրքիոյ
և Անգղիոյ վրայէն վերցնելով Ռուսի-
ոյ կողմէ դարձնել, տարակոյս չու-
նինք որ ասոր առաջը կրնայ առնը-
ւիլ Հայաստանի վիճակն իրապէս բար-
ւաճելով և ժողովուրդը դո՛ւ ընելով,
որ միայն հարստահարութեանց կա-
տարեալպէս բարձմամբ կրնայ ըլլալ :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 16 օգոստոս
Լորտերուն ժողովին մէջ Լորտ Նօթի-
քօթ հարցման մը պատասխանելով ըստ
թէ Անգլոսակոն Ասիոյ մէջ Ռուսաց ը-
րած դիմումորական շարժմանց վրայ առ-
նուած տեղեկութիւնը անբաւական են :
Ստիպել կարող է յայտարարել թէ զրբ-
կուած Ռուսական դեսպանութեան զըլ-
խաւորը Զարին մէկ նամակը յանձնու-
ր Բաղդադի Էմիլիոյ ի պատիւ Ռու-
սական դեսպանութեան զօրահանգիս մը-
րեր է : Անգղիոյ կառավարութիւնը Ռու-
սական դեսպանութեան աղբեղութիւնն
հակադէմք համար Անգղիական դես-
պանութիւն մը պիտի զրկէ ի Բաղդադ :
Լոնտոն 16 օգոստոս
Երեսփոխանական ժողովին մէջ Պ.

Պաշտոնական հրատարակության համարները մեր համարներում են, որով կը յայտնեն թէ Ռուսը մտնենա՞նք այժմ իրենք անգլիական դրոշակ պիտի քաշեն Պաթմուսի վերայ : Այս համարներին հաղորդուելէն, ըստ Պ. Պաշտոնական, չհետեւիր թէ Անգլիան ընդունած ըլլայ այդ խնդիրը :

Նոյն ժողովին մէջ՝ քանի մ'առանձնական անգլիական պաշտօնական վրայ՝ կառավարութիւնը խօսք տուաւ որ կարելի եղածին չափ չուտով նոր քննութիւն մը բանայ Թալմիթի թղթակից Պ. Օլիւստան ման վրայ :

Անգլիական կառավարութիւնը չէ ընդունելու Արարտի յունաց մէկ խնդիրն, որով կուզէին որ յունարէն լեզուն պաշտօնական լեզու ճանչուի Արարտի մէջ :

Լոնտոն 16 օգոստ.

Խորհրդարանին այսօր իւր նիստերը դադարեցուց Թալմուսի մէկ ճառովն, որոյ գլխաւոր մասերն հետեւեալներն են .

« Տէրութեանց խորհուրդը խաղաղութեան մը յանգեցաւ, զոր գոհացուցիչ և տեսական ըլլալ կը կարծենք :

« Թէպէտ Թուրքիա մեծամեծ ծախքաւ իրենք այս պատերազմին մէջ, սակայն եղած կարգադրութիւնը ոչ նուազ նպաստաւոր է իւր ժողովրդի : Ար և է յարձակմանց դէմ Գրան անկախութիւնն ապահովեցաւ :

« Սուլթանին հետ պաշտպանողական դաշնադրութիւն մը կնքուեցաւ, որ Ասիական Թուրքիոյ գաւառացի նկատմամբ աւելի որոշ կերպիւ կը բացայայտէ 1856ի դաշնադրութեամբ յանձն առնուած պարտքին, որը ասկէ առաջ դործադրութեան մէջ պէտք եղած բոլոր ազդուութիւնը չունեցան :

« Սուլթանին ինքն ալ պարտականութիւն յանձն առաւ ի գործ դնելու բոլոր այն միջոցներն որք հարկաւոր են բարեօրէն կառավարութիւն մը տալու յիշեալ դաւառացի : Եւ որպէս զի ներկայ դաշնադրութեան նպատակին դարձադրութիւնն ալ փութով յառաջ երթայ, այս բանիս համար ալ Անգլիա Արարտ կղզին գրաւելու և ինքնին կառավարելու ձեռնարկեց :

« Անգլիոյ կառավարութեան յարաբերութիւններն օտար տէրութեանց հետ լաւ են : »

Վիեննա 16 օգոստ.

Պաշտօնական տեղեկութեան մէջ կը յուսան թէ Պոստա-Սէրայ չարաթ օրը կը դրաւուի :

Տեղի ունեցած դիւանագիտական բանակցութեանց մէջ՝ Գուրը խաղաղասիրական մեծ յօտարութիւն ցոյց կը տայ : Պոստիւրի և Հէրսէքի գրաւման նկատմամբ Աւստրիոյ և Բ. Գրան մէջ ըլլալիք դաշնադրութիւնն այսօր կնքուեցաւ :

Պոստիւրի և Հէրսէքի պաշտօնական լուր մը չկայ հրատարակուած, Պոստիւր և Հէրսէք գտնուող Աւստրիական զօրաց վրայ լրացրաց տուած լուրերն անկարելի են :

Մոսկու 16 օգոստ.

Աւստրիական զօրքերը Կուպինցայի կողմերը հետադադարեցին մ'ըրած առանձին, ապստամբաց կողմէն սատարիկ յարձակում մը կրելով, մեծ կորստեամբ ետ քաշուեր են :

Պիլիպատ 16 օգոստ.

Սերպիոյ կառավարութիւնը Տրինայի կողմը (Պոստիւր սահմանադրութիւն) զօրք կը դուրսարէ :

Պիլիպատ 16 օգոստ.

Գերմանիոյ կայսեր դէմ առաջին ըստ պաշտօնական փորձն ընող Հայտել ոճրաւորքը մահապարտ վճռուած ըլլալով այսօր զլրատուեցաւ :

Բեռլին 16 օգոստ.

Այս առաւօտ երկու անձանք մը ձերբ զաւթեցին Բեռլին քաղաքէն դուրս գտնուող Գրան քաղաքէն : Պաշտօնական ծիղրիւթիւնը զօրապետը կ'ըսէ թէ 50 վաշտ Աւստրիական զօրք Օսմանցի կառավարաց հետ ի միասին ապստամբաց դէմ կը քաշեն :

Վիեննա 17 օգոստ.

(Պաշտօնական) ծիղրիւթիւնը զօրապետը կ'ըսէ թէ 50 վաշտ Աւստրիական զօրք Օսմանցի կառավարաց հետ ի միասին ապստամբաց դէմ կը քաշեն :

Լոնտոն 17 օգոստ.

Կառավարութիւնը ժողովուրդը և ծառայողները դուրս տանելու արգելքը վերցուց :

Փարիզ 16 օգոստ.

Ռուսաց Կոստանդին և Ալեքսիս մեծ դուքսերն այս առաւօտ Փարիզ հասան :

Այս առաւօտ հասան հետաքննիչ

Վիեննա 18 օգոստ.

Պաշտօնական լուրեր կը ծանուցանեն թէ ուրբաթ օրն Աւստրիական զօրքերը Պէշտովացի վրայ քաշուի և յարձակմամբ առեր են : Աւստրիացի զօրքերն ըլլալով դէպ ի վաշտ փախուի են :

Լեյթենանտ դէմ եղած ցոյցի մը վրայ աւստրիացի թորակները վրայ յարձակելու խորհրդէն ետ կեցան :

Վիեննա 19 օգոստ.

Ապէնարութիւնը լրագրին երկուսն թըւով կը ծանուցանէ թէ Ջաքարիի զօրաբաժինը չարաթ օրը Տալոյի մօտ ապստամբաց վրայ յարձակեցաւ, և բուն կուսէ մ'ետեւ ապստամբք ի փախուստ դարձան : Այս կուսին մէջ կայսերական զօրաց կորուստն զգալի է :

Բեռլին 19 օգոստ.

Բաղմաթիւ Նիշիլիսիներ (ոչնչական) ու Բանալիսիներ (համալրական) բռնուեցան Մէսէնի մօտ զօրավարին սպանութեան պատճառաւ :

Ալեքսանդրիա 19 օգոստ.

Ժառանգ-Խլիսան և Թոսուս փաշայի այրի Ֆաթմա հանրին իրենց բոլոր հարստութիւնն Եգիպտոսի պարտուց վըճարման նուիրեցին :

Լոնտոն 17 օգոստ.

Օսմ. Գոն.	42 5/8
Փոխ.	1865 48
»	1869 46 3/8
»	1871 48 3/4
»	1872 23
»	1873 44 1/2
» Եգիպտ.	69
Անգլ. Գոն.	95 5/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Ի. Պօլսոյ Յունաց Պատրիարք Տ. Յովակիմ Բ. որ ժամանակէ մ'ի վեր հիւսնէք էր, ուրբաթ գիշեր վախճանեցաւ Հէլլադի կղզին իւր տանը մէջ, և շարժութիւնը մարմինը զմրուս ունիւ ետեւ յատուկ չորհրդակցութեան ներքին նաւահանգիստն և անտի մեծ հանգիստի Պատրիարքական եկեղեցին տարուեցաւ զգետաւորեալ և աթոռի վրայ նստուցած :

Հետեւեալ օրը՝ կիրակի՝ յաղարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ ի ներկայութեան տնթիւրաւորութեան, որք Պատրիարքական եկեղեցւոյն մէջ ու գուրը լցուելէ զատ Գիշերի փողոցներուն մէջ ալ լցուած էին, այնպէս որ անցուղարձն անհնարին եղած էր :

Մայրաքաղաքի քրիստոնէայ հաւատարմութեանց ինչպէս նաև Հրէից հաղ. որ զլա խնդրի յատուկ պատգամաւորութիւնները զրկած էին վիճ. Սուլթանն երկու թիկնապետ, Բ. Դուռն ալ բոլոր նախարարութեանց Միւսթէշարները զրկած էր, ինչպէս նաև կրօնական գործաց տեսուչ Չիվէր պէյն և արարողագրական վարչանորդ Գիշերի Հիւսնիսի իրենց համալրականներով, Ռուսիոյ գետնային Լուսնիսի իշխանը, Յունաստանի և Ամերիկայի գետնայիններն, և միւս գետնայինները ալ առաջին թարգմանները ներկայ էին :

Ժամ 5 1/2ին կրօնական արարողութիւնն աւարտելով, հանգուցեալ Պատրիարքին մարմինը եկեղեցիէն դուրս հանուեցաւ աթոռի վրայ, զոր եկեղեցականք բարձած էին :

Թափորին կառավարողը հեծն-լազորաց գումարտակ մը, երկու քովէն ալ կերթային բաղմութիւն ոտով :

Կանոնութեան զինուորք, բայց բազմութիւնն այնչափ մեծ էր, որ բարկարգութիւն պահպանել անհնարին եղաւ և ժողովուրդք ու զինուորք իրար խառնուեցան :

Ժամ 8 ին թափորն Այս գաւառի նաւամատոյցն հասաւ, ուր չորս շաբաթէն կ'ապանէին, և կանոնաւոր զօրաց գաւառատակ մը բարեկ կանգնած էր : Ծագեանները բաղմութեամբ լցուեցան, և ի ծայն եկեղեցական երգաց և զինուորական նուագարանաց ճանաչելի եղելով Սա. մաթիա գնացին, ուր հանգուցեալ Պատրիարքին մարմինը չորհրդակցութեամբ լցուեցաւ Ս. Կոստանդինոսի եկեղեցին տարուեցաւ, անկէջ ալ Պա. լըզլըյի եկեղեցին, ուր նոյն իրիկուսն և հետեւեալ առաւօտուն ի տեսիլ հասարակութեան դրուելէ ետեւ, երէկ յատուկ պատարագէ մ'ետեւ թաղուեցաւ :

Այսպէս վերջացաւ հանգուցեալ Պատրիարքին յուրարկաւորութեան հանգէսը, փառաւոր հանգէս, որ գործողութեամբ արժան եղած բարեկարգութեամբ չկրցաւ կատարել մինչև իսկ կըսուի թէ ցաւալի կուսներ ալ ծագեր են, որոց մէջ սատրկանութեան միջամտութիւնն հարկ եղեր է :

Կայսերական հրամանաւ

Պետական խորհրդոյ անդամ Կադմի պէյ ծովային նախարարութեան Միւսթէշար անուանեցաւ փոխանակ իզդէթ Էֆէնտիին, որ Պետական խորհրդոյ անդամ անուանեցաւ :

Երբեմն Սօֆիայի կառավարիչ վէյսի փաշան Մարաշի կառավարիչ անուանեցաւ :

Պոստուրի կառավարիչ Թալի Է. Գիշերի Հոմի կառավարիչ անուանեցաւ :

Փայտի կառավարիչ Սայիտ Էֆէնտիին Նէճտի կառավարիչ անուանեցաւ :

Կիրակի օրն Ա. ստրո-Հունգարիոյ կայսեր ծննդեան տարեգարծն ըլլալով մայրաքաղաքիս նաւահանգիստը գետնուղ գետնային ընդ շաբաթներն ինչպէս նաև Օսմանեան պատերազմանաւերը դրօշակներով զարդարեցան և կէս օրին ողջունի թնդանթներ արձակուեցան :

Արքայի սենեկապետներէն մին և Բ. Դրան առաջին թարգման Միւսնի պէյ Աստրո-Հունգարիոյ գետնայիններն երթալով վիճ. Սուլթանին և Բ. Դրան խնդակցութիւնն հաղորդեցին Չիլի կամին :

Ա. ստրո-Հունգարիոյ կայսրն 1830 օգոստոս 6/18 ին ծնած է :

Ճէրլտէի Հովատիս լրագրիւր կը ծանուցանէ թէ հասարակային շինութեանց Միւսթէշար Օսման Գիշեր Էֆէնտիին քիչ օրէն Եւրոպայի ուղևորի :

Թղթագրամաց բարձման յանձնարարութիւնն հասցիւն եղած է մինչև չարաթ օրը 17:337-655 թղթ :

Թէքլիմաղէն կը գրեն մեղ թէ յառաջիկայ վերափոխման տօնին առթիւ Թէքլիմաղ գնացող ուստարաց համար վաճառի սենեկներն ամբողջապէս պարագիւ պատուաւ են : Թէ վաճառի մէջ Ռուսաց զօրք բնաւ չկան, և թէ գնացող ուստարաց ամեն ապահովութիւն և հանգստութիւն պիտի զրուեն :

Նոյն գրերը կը ծանուցանեն նաև

Թէ Ռուսական հեծնազօրն ալ ի մօտոյ թէ՛ քաղաքէն և թէ՛ շրջականերէն մի կնքու պատարասութիւն կը տեսնէ : Յատուկ նաւամատոյց մը կը շինուի մեծ փութով՝ ձիերն ու ռազմամթերքը գլխաւորութեամբ շաբաթները փոխադրելու համար :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍՏԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

7 օգոստ.	Երկուշաբթի իրիկուն	14.13
8 օգոստ.	Երեքշաբթի առաւօտ	
	Բացուեցաւ	14.15
	Կէս օրին	14.13
Բուսիլի երկաթուղի	Փր.	55 50
Թղթագրամ	Ժր.	293 20

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՎՈՅՑ

Կ. Պօլսո 7 օգոստոս

Սուլթան Էֆէնտիին	Բաժ.	4.15
» Փոխանակութեան	»	3.35
Կ. Պօլսոյ Պաշտօնային	»	6.15
Քիւսիլի Էֆէնտիին	»	5.15
Քիւսիլի Օսթրո-Թիւրք	»	—
Փոխ.	1863	Ձր. 80
»	1865	» 85
»	1869	» 79
»	1872	» 24 1/2
»	1873	» 73
Թրամուայ	Օսմ. ժր.	4 60

ԸՆԹԱՑՔ ԿՐՈՍՄՈՅ

7 օգոստոս

Անգլ. ժր.	Վր.	109 4
Նարոյնի սոկի	»	87 12
Խիւսիլի Ռուս	»	89 20
Գըրմից	»	51 10
Հինգ ֆրանք	»	—
Հինգ նոց	»	120
Պիլիպ	»	177

Ա. Գ. Ա. Յ. Ն.

ՄԻՋԱԴԻՊ

Ազգային ժողովոյ վերջին ժողովումն մէջ երեսփոխան Թ. Պէկիւն Էֆէնտիին խնդիր յարուցել էր թէ Հայկական խնդրոյն մէջ ճիշդութեան խաղաղաւանութիւնը տեղի ունեցած էին, որոցմէ իւր թէ խաղաղութեան թէ՛ Ս. Պատրիարքը, թէ՛ կայսերական խորհուրդը, ի Պէկեան Էֆէնտիին, և թէ երես իրեն նման մէկ երկու հաղաւթաւ և նրաւոր քաղաքագէտներէ, հետեւաւոր աղբիւն շտհն ու աղագայն ըստ Պէկեան Էֆէնտիին կարծեաց՝ զոհ գնացած էին ճանապարհ :

Պէկեան Էֆէնտիին այս ատորիւնակ յայտարարութիւններն ինչպէս որ դիւրին է գուշակել, մեծ գայթակղութիւն յարուցին, և ընդհանուր հետաքրքրութիւն շարժեցաւ իւր ձեռքն ունեցած վաշտակաւ գրութեանց խմատն հասկնալով, զոր ձեռքէն ցոյց կուտար ժողովին ըսելով թէ իւր ըսածներն անսոցմով պիտի ապացուցանէր :

Ազգային խնդրոյն ի մօտոյ ծանօթութիւնն ունեցող և գործերը պաղարեամբ դիտող անձինք նոյն վայրկեանէն սա կարծիքն ունեցան թէ Պէկեան Էֆէնտիին՝ առաւել անձնասիրութեանէ քան ազգասիրութեանէ գրգռմը կը փորձէր ժողովոյ ականութիւն վատկելու անխիղճ նպատակաւ : Բայց՝ ճշմարիտ ըսելու համար՝ այս կարծիքն ընդհանուր չէր : Ծառնուն սիրտն անհանգիստ էր, և այս անհանգստութիւնը չարափ փարատէր մինչև որ նախաքննիչ յանձնաժողովի իւր կարծիքը բերէր ժողովին : Սակայն գոհ ենք, որ Պէկեան Էֆէնտիին աղբային ժողովոյ վերջին նստին մէջ այս անասալ գովութիւնը փոքրաւոր :

